

ՅՈՒՆԵՐԱՆ ԳԳՐՈՅԼ

ԵՒ

ՆՐԱ ԶԵՐԴԵՑՄԱՆ ՅՐՋԱՆԵՐԸ

(Շարունակություն)

Փիլոնի երկերը, ինչպէս պարզել էինք վերեւ, կազմում են թրակացու քերականութեան ու Պիտոյից գրքի հետ միասին յունաբան թարգմանութիւնների հնագոյն շերտը եւ թարգմանուած պիտի լինեն Տիմոթէոսի զակաձառութիւնից առաջ ուրեմն՝ ոչ ուշ քան վեցերորդ դարի առաջին կէսը. Իրենէսոսի երկերի հայերէն թարգմանութիւնները, ժամանակից լինելով Փիլոնի թարգմանութիւններին, պարզ է որ յետ են տարուելու նոյն ժամանակաշրջանը, ուստի նրանց թարգմանման terminus post quem ոն կամ վերջին եզրը պէտք է լնդունել ոչ թէ 604 թիւը, ինչպէս կարծել էր Հ. Ա. Ակինեանը, այլ 552—564 տարեթուերը, երբ թարգմանուած էր Տիմոթէոս Կուղի Հակաձառութիւնը: Իրենէսոսի եւ Փիլոնի թարգմանիչների նոյնացումը կամ ժամանակակցութիւնը մատենագրական այնքան կարեւոր մի փաստ է, որ աւելորդ չեմ համարում ֆր. Կոնիբիրի եւ Հ. Վարդանեանի լեզուական վերոյիշեալ համեմատութիւններին աւելացնել նաեւ լեզուական իմ դիտողութիւնները, որ ունեն բոլորովին տարբեր բնոյթ եւ լրւաբանում են յունաբան լեզուի զարդացման յաջորդական ընթացքը:

Խօսելով վերեւ Փիլոնի, Պիտոյից գրքի թրակացու քերականութեան լեզուական առանձնայատկութիւնների մասին (ան § 40 Բ), ես մատանացոյց էի արել, որ այս հնագոյն թարգմանութիւնները գրեթէ չեն գործածել Հակ-, տար- եւ փոխ- նախագրութիւնները, որպէս թարգմանութիւն յունական ձաւու, ծառ- նախագրութիւնների: Արդ՝ իմ այդ դիտողութիւնը կատարելապէս հաստատում են այժմ եւ Իրենէսոսի թարգմանութիւնները: Այդ թարգմանութիւնները եւս չունեն ամենեւին փոխ- նախագրութիւնը, տար- նախագրութիւնը նրանց մէջ եւ ոչ մի անդամ չի համապատասխանում յունաբան ծառ- նախագրութեան, այլ գործ է ածուած Ամերդարեան գրաբարի հետեւութեամբ, ինչպէս տարալսեմ, տարակարծ, տարաժամ եւն, իսկ Հակ- նախագրի փոխարէն գործ է ածուած Հա-

կառակ-¹, ինչպէս այդ առանձնայատուկ էր նաեւ Փիլոնի ու Պիտոյից գրքի թարգմանութիւններին: Վերեւ մենք տեսանք (§ 42, Դ 2), որ մի շարք յունաբան բառեր, ինչպէս “տարբեր, տարբերեմ, տարբերութիւն, ներհակ, ներհակութիւն, մակացու, մակացութիւն”, առաջն անդամ գործ են ածուել յունաբան թարգմանութիւնների երկրորդ խմբում: Լեզուական կարեւոր այդ գիտողութիւնը հաստատում է այժմ եւ Իրենէսոսի բառապաշարի քննութեամբ: Ինչպէս Փիլոնի, Պիտոյից գրքի եւ թրակացու քերականութեան մէջ, նոյնպէս եւ Իրենէսոսի թարգմանութիւններում, յունաբան այդ բառերից ոչ մէկը գործածուած չէ:

Ինչպէս յայտնի է, յունաբան թարգմանութիւններից մի քանիսում փորձ է արուած ստեղծելու իգական սեռի գերանունական յատուկ ձեւեր՝ Սէ եւ Նէ, որոնք գործ են ածուած հետեւեալ թարգմանութիւններում՝ Փիլ. Այլու. 156, Փիլ. Հեսս. 6, Պիտ. 375, 377, 380, 381, 383, 384, Ներա Պիտ. 377, Սէ Տիմ. Հակ. 33, 42, զսէ Տիմ. 26, 236, զնէ Տիմ. 35, 219, Ներա, Ներայ Տիմ. 222, 226, 283, 292, Սէրայ 194, Նէմա, Նեմա, Նէմայ, Նեմայ Տիմ. 15, 31, 95, 195, 196, 222, 292, Նէրում 105 եւն: Թրակացու քերականութիւնը չունի իգական սեռի այդ յատուկ ձեւերը, որով հետեւ իգական սեռի այդ գերանունները չկան նաեւ յունաբան բնագրում: Սակայն Իրենէսոսի երկերում այդ գերանունները հանդիպում են մի քանի անդամ՝ “Ըսդդէմ Հերձուածոց” թարգմանութեան մէջ՝ Նէ Իր. Հերձ. 91 եւ Սէ Իր. Հերձ. 140, 85:

Նիկ. Ագոնցն իր “Արուեստ Պիոնիսեայ” աշխատութեան մէջ ենթադրում է, որ յիշեալ երկերը, որոնք գործ են ածում Սէ ու Նէ իգական գերանունները, գուցէ աւելի ուշ ժամանակի թարգմանութիւն լինեն, քան այն թարգմանութիւնները, որոնց մէջ այդ գերանունները գործածուած չեն (էջ CLXXVI—CLXXVII): Այս ինդիքը ստանում է այժմ բոլորովին հակառակ լուծում: Սէ եւ Նէ իգական գերանունները գործ են ածուած, ինչպէս տեսանում ենք, յունաբան առաջին շերտի թարգմանութիւններում, նաև Տիմոթէոս Կուղի Հակաձառութեան մէջ, որ

¹ Հակառակակծեմ Իր. Հերձ. 37, Հակառակակրութիւն Իր. Հերձ. 151, Հակառակակառութիւն Իր. Հերձ. 234, բայց Հակաձառութիւն Իր. Հերձ. 151 եւ անհակաճառ. Իր. Հերձ. 23: Նախական ձեռագերը, թւում է ինձ, որ ունեցել է Հակառակաճառութիւնը եւ ամենհակաճառաց:

յունաբան երկրորդ շերտի հնագոյն թարգմանութիւնն է։ Խսկ յետագայ թարգմանիչները խորթ ու անսովոր այդ ձեւերը, ըստ երեւոյթին, անընդունելի են համարել եւ այլեւս չեն դործածել։ Այն հանգամանկը, որ այդ գերանուները, բացի հնագոյն ըրջանի որոշ թարգմանութիւններից, խիստ յաճախ ու բազմազան ձեւերով գործ են ածուած նաեւ Տիմոթէոս կուղի Հակածառութեան մէջ, կարող է թերեւս մի նշան համարուել, որ այս վերջին թարգմանութեան ժամանակը բաւական մօտ եղած պիտի լինէր հնագոյն թարգմանութիւնների ժամանակաշրջանին։ Եթէ յետագայում հնարաւոր լինի իմ այս գիտողութեանն աւելացնել եւ ուրիշ նման փաստեր, այդ գէպքում՝ Փիլոնի խմբի թարգմանութիւնները գժուար պիտի լինի յետ տանել հինգերորդ դար, այլ նրանց ժամանակը որոշուելու է վեցերորդ դարի առաջին կիսի սահմաններում։

Ինչ վերաբերում է Իրենէոսի թարգմանութիւններին, նրանց հնութիւնը կարծում եմ որ կարելի է համարել վերջնականապէս ապացուած։ Եթէ անգամ Փիլոնի ու Իրենէոսի թարգմանիչների նոյնացման գէմ լինեն որեւէ առարկութիւններ, յամենայն գէպս՝ այդ թարգմանութիւնների խմբակցութիւնն ու ժամանակացութիւնն այնքան պարզ է ու անվիճելի, որ այլեւս ոչ մի կասկած չի կարող լինել, որ Իրենէոսի թարգմանութիւնների ժամանակը պէտք է դնել Տիմոթէոս կուղի Հակածառութիւնից առաջ, հաւանաբար, վեցերորդ դարի առաջին կիսում։

§ 54. Կոնսուէ Թէնունիւնէրէ հայէւէն Շառէսնուննեան ժամանակաշրջանը։ — Կոնսուէն վերագրուած մեկնութիւնների նկատմամբ նախ կարեւոր եմ համարում այստեղ յիշատակել, որ 1904 թուին, Կոնսուէ հայերէն բնագիրը հրատարակելուց յետոյ¹, յաջողուել էր ինձ գտնել էջմիածնի մատենագրաբանում մեկնութիւնների մի նոր ընտիր օրինակ, որ մինչեւ այժմ մնացած է անյատ։ Այդ նոր ձեռագիրի այժմեան համարն է թ. 579 (= Մայր Յուցակ թ. 565); Յ. Կարենեանցի ցուցակում այդ ձեռագիրը մանրամասն նկանցի ցուցակում այդ ձեռագիրը մանրամասն է միայն, որ ձեռագիրը ժողովածու է ութածալ բոլորագիր և Ստեփան վարդապետէ ի թուին Հայոց ՌՕԲ² ունի յիշատակարան³։ Աակային այս համարութիւնները չեն կարող հիմք ծառայել Փիլոնի ու Կոնսուէ թարգմանիչների նոյնացման կամ ընկերակցման։ Կոնսուէ լեզուական նմանութիւնները նկատելի են, ինչպէս տեսանք, յունաբան նաեւ միւս թարգմանութիւններում (անս վերեւ § 42 եւ § 44) եւ բացատրում են նրանով, որ յունաբան թարգմանութիւնների երկրորդ ու երրորդ շերտերը ենթարկուել են մեծ կամ փարք չափով հնագոյն թարգմանութիւնների աղղեցութեանը։ Յունաբան թարգմանութիւնների խմբաւորութերը որոշելու հա-

տեղեկութիւնն անգամ սխալ է ՌՕԲ թուականի փոխարէն պէտք է լինի 2ՌԲ (1303թ.)։ Ինչպէս տեսնում ենք, նոր ձեռագիրը բաւական պատկառելիէ իր հնութեամբ եւ, որքան յիշում եմ, ունի մեծ թուով ընտիր ու նոր ընթերցուածներ։

Կոնսուէ մեկնութիւնների հայերէն թարգմանութեան ժամանակը մինչեւ այժմ մնում է դեռ անորոշ։ Հայկագեան բառգրքի աշխատակիցները համարում են նրա լեզուն “Հին եւ ընտիր”։ Այնուհետեւ, թէ այս եւ թէ յունաբան դպրոցի միւս երկերը վերագրուել են, սովորաբար, հինգերորդ դարի կրտսեր թարգմանչաց խմբին¹։ Խորենացու խնդրի հետ միասին աւանդական այս տեսակէտը ենթարկուեց, բնականաբար, խիստ քննադատութեան։ 1904 թուին “Հանդէս Ամսօրեայ”, ուսումնաթերթում լրյուտեաւ Հ. Ն. Ակինեանի ընդարձակ մի յօդուածը, որի մէջ հեղինակը, նորից քննելով այս խնդիրը, ենթագրում է, որ մեկնութիւնները թարգմանուած պիտի լինեն 490 թուից յետոյ եւ եօթերորդ գարից առաջ²: “Մեկնութեանց լեզուն, — ասում է Հ. Ակինեանը, — շատ կը նմանի Փիլոնի, Կալիսթենեայ գրոց թարգմանութիւնը լեզուին եւ ոճին. եւ այս կը գրգէ զմեղ ընդունելու թէ կամ նոյն անձը, որ զանոնք յեղած է ի հայ — եւ օր գժուարին է — եւ կամ անոր ընկերակիցներէն մին թարգմանած է միեւնոյն ատեն³։ Ն. Ակինեանի գիտողութիւնն ուղիղ է միայն այն չափով, որ Կոնսուէ թարգմանութեան մեջ հանդիպում են յաճախ Փիլոնեան խմբի յատուկ բառեր, սակայն այս ընդհանութիւնները չեն կարող հիմք ծառայել Փիլոնի ու Կոնսուէ թարգմանիչների նոյնացման կամ ընկերակցման։ Կոնսուէ լեզուական նմանութիւնների նկատելի են, ինչպէս տեսանք, յունաբան նաեւ միւս թարգմանութիւններում (անս վերեւ § 42 եւ § 44) եւ բացատրում են նրանով, որ յունաբան թարգմանութիւնների երկրորդ ու երրորդ շերտերը ենթարկուել են մեծ կամ փարք չափով հնագոյն թարգմանութիւնների աղղեցութեանը։ Յունաբան թարգմանութիւնների խմբաւորութերը որոշելու հա-

¹ P. Sukias Somal, Quadro delle opere di vari autori, Venezia 1825, էջ 18. Հ. Գար. Զարդարանաւեան, Հայկական թարգմանութեանց նախնեաց, Վանեանիկ 1889, էջ 142, եւն։

² Կոնսուէ մեկնութիւններ գրեթե Պատուածարանի համար 1904, Մայիս էջ 139—146 եւ Յունիս էջ 165—173։

³ Տես Կոնսուէ, էջ 166։

մար կարեւոր են ոչ այնքան նրանց յատուկ բառապաշարի մասնակի նմանութիւնները, այլ նրանց լեզուական ու քերականական առանձնայատկութիւնների այն բնորոշ ու ուշագրաւ տարբերութիւնները, որ մատնացոյց են արուած սոյն ուսումնասիրութեան մէջ¹:

Պօտենալով խնդիրն այս տեսակէտից, կարծում եմ, որ գժուար չէ ապացուցանել, որ Նոննոսի մեկնութիւնները թարգմանուած պիտի լինեն կամ յունաբան երկրորդ շերտի թարգմանութիւնների ժամանակ կամ նրանցից յետոյ, ուրեմն՝ նրա թարգմանման terminus ante quem ուո՛ կը լին ոչ թէ 490 թիւը, ինչպէս կարծել է Հ. Ակինեանը, այլ վեցերորդ դարի երկրորդ հէսը:

Այս եղբակացութիւնը հիմնաւորելու համար կարեւոր են ինձ թւում լեզուական հետեւեալ դիտողութիւնները: 1. Նոննոսի թարգմանութեան մէջ գործ են ածուած յունաբան բուլոր այն բառերը եւ նախադրութիւնները, որոնք հանդիպում են միայն յունաբան երկրորդ ու երրորդ շերտի թարգմանութիւններում, ինչպէս օրինակ՝ մակացու Կոնն. 11, 7, Կերչակ 64, 4, ապրերութիւն 24, 18, արտունանկեալք 49, 7, փոխակերպիր 43, 23, փոխարկեմ 74, 10, 80, 6, փոխարերութիւն 12, 21, 35, 18, հակատոփող 26, 23, 78, 15, հակադարձիր 46, 15, հակակայիմ 69, 5 եւն:

Վերեւ մենք մատնացոյց էինք արել, որ այս բառերը կազմուած պիտի լինեն յունաբան թարգմանութիւնների երկրորդ շրջանում (տե՛ս § 42 Դ, 2): Թթակացու քերականութեան, Փիլոնի ու Պիտոյից գրքի թարգմանութիւնների ժամանակ, ըստ երեւոյթին, գրանք գենեւս գոյութիւն չեն ունեցել (տե՛ս վերեւ § 40բ եւ գ): Լեզուական այս դիտողութիւնը կատարելապէս ճշուեց նաեւ իրենէսոսի թարգմանութիւնների քննութեամբ, որոնք, ինչպէս տեսանք, ժամանակակից են Փիլոնի թարգմանութիւններին (տե՛ս վերեւ § 53): Եթէ Կոննոսի թարգմանութիւններին (տե՛ս վերեւ § 53): Եթէ Կոննոսի թարգմանութիւննը եւս լինէր խմբակից հնագոյն թարգմանութիւններին, պարզ է որ նրա մէջ չէին կարող

¹ Իրենէսոսի ու Փիլոնի թարգմանութիւններում ոչ միայն աւելի բազմաթիւ եին ու պայծառ նրանց բառապաշարի նմանութիւնները, այլ եւ նմանութիւնները նկատելի եին նաև նրանց ոճի, դարձուածքների, բառերի այլմասս գործածութեան, Յ. Գրբից առնուած հատուածների եւ քերականական ձեւերի մէջ: Բացի այն նրանց մէջ ես շեմ նկատել լեզուական ու քերականական այն յատուկ առարերութիւնները, որ իսկոյն աւքի են ընկում, երբ համեմատութեան են առաւում յունաբան թարգմանութիւնների տարբեր խմբերը:

գործածուած լինել վերոյիշեալ նոր բառերն ու նախադրութիւնները: Իսկ քանի որ այդ բառերը հանդիպում են Նոննոսի թարգմանութեան մէջ, կարծում եմ, որ կարող ենք եղբակացնել, որ այս մէկնութիւնները ժամանակակից չեն հնագոյն թարգմանութիւններին եւ թարգմանուած են, ամենայն հաւանականութեամբ, աւելի ուշ:

2. Այս ենթագրութիւնն անելուց յետոյ՝ այնուհետեւ հաւանական է դառնում, որ Նոննոսի թարգմանիչը եւս, ինչպէս եւ յունաբան դպրոցի երկրորդ ու երրորդ շրջանի թարգմանիչները, ըստ երեւոյթին, ծանօթ է եղել թթակացուքերականութեան ու Պիտոյից գրքին, եւ քերականական ու Ճարտասանական յատուկ բառերը մեկնութիւնների մէջ ծագում են, հաւանաբար, հնագոյն այս թարգմանութիւններից:

Այս տեսակէտից հետաքրքիր է Կոննոսի թարգմանութեան մէջ արձանականի վերաբերեալ մեկնութիւնը, որը գրեթէ համապատասխանում է Պիտոյից գրքի՝ “Յաղագս պարսաւի տեսութեան:

Նոննոս, էջ 24, 14—17.

Պիտ., էջ 445, 10—14¹.

“Արձանականնրան պարսաւի արձան է ի սաւ է Յուլիանոսի գործոցն. այլ զանազանի թարգմանիչները, որպէս ի ներբուպարաւականն, գեանս: Ի վերայ ածել եւ քանզի է պարսաւակ ի ձեռն զազդն: Կմանապէս եւ ներբուղական գլխոցն. որպէս զազդէ, ի վարժից, ի գործոց, ի բաղդատութենէ: Այլ արձանականն ի ձեռն տութիւնն: Եւ զի վերայ գործոցն մայն է, եւ թէ բանին՝ պատճառին ձայնապատահէ: ի բաղդատուն նակցեալ”:

Թթակացու քերականութեան ու Պիտոյից գրքի աղղեցութեան հետքեր կարող են համարուել նաեւ քերականական ու Ճարտասանական հետեւեալ բառերը.

*. Էնէտակայ Կոն. 10, 16, Թթ. 23, 24, 45 եւն, բ. Պարէլյան ջանացաւ Կոն. 10, 16¹ Թթ. 23 եւն, գ. Մէլլառ ապաւնի Կոն. 10, 16¹ Թթ. 23, 24, 46 եւն, գ. Էւսուլուշաւ ստուգաբանութիւն Թթ. 1, ստուգաբանեմ Կոն. 51 Տ. Է՛պանումոն մականուն Թթ. 17, 19, Է՛պանումոն մականունութիւն Կոն. 32, 18, 41, 3, լ. Պարձուած ածանցիմ Թթ. 16, 29, Կոն. 51, 9 Ստուգա է աստուած անցեալ է ո, պէտք է լինի՝ “ածանցեալ է ո, գովասանութիւն Կոն. 16, 9, գովասանութիւն Կոն. 1843:

¹ Տե՛ս Մովսէսի Խորենացւոյ մատենագրութիւն՝ Անդամականի 1843:

սանական գիտ. 580, 17, բ չէպահնէս արտասեմ
Նոն. 23, 6, գիտ 529, 15 եւն, բ. լամբօս մե-
ծավերջ Կոն. 36, 20, թր. 43, 17, մեծավերջա-
կան գիտ. 369, 14: Ըստ Հ. Ակինեանի Կոնոսի
“սղավերջը բառը (Էջ 4, 3) թարգմանութիւն
է յունարէն πυρδόχιος բառի (տե՛ս Հ. 1. 1904,
Էջ 171): Ուշադրութեան արժանի է, որ յու-
նարէն նոյն բառը թրակացու քերականութեան
մէջ թարգմանուած է “անդայտ” եւ ոչ
“սղավերջ”:

3. Նիկ. Ադոնցն իր սըրուեստ Դիօնիսիսայու
աշխատութեան մէջ նկատել էր. որ Թրակացու
քերականութեան թարգմանը յունարէն ծափուն
բառը հասկացել է իբրեւ սարդենին (**Էջ 4, 8**),
իսկ Կոննոսի մեկնութիւնների մէջ նոյն ծափուն
բառը թարգմանուած է “մուրտա” (**Էջ 71, 10**):
Ն. Ադոնցի կարծիքով, այս բառի տարրերը թարգ-
մանութիւնը ուշազբաւ մի ապացոյց է, որ Թրա-
կացու ու Կոննոսի թարգմանիչները չեն կարող
լինել միեւնոյն անձը: Եւյս նկատողութիւնը, որ
միանգամայն ճիշտ է, հաստատուամ է նաև իմ
վերջիշեալ լեզուական դիտողութիւններով:
Կոննոսը եւ Թրակացու քերականութիւնը, ինչ-
պէս տեսանք, թարգմանուած են յիրաւի տար-
բեր ժամանակաշրջաններուամ եւ, բնականաբար,
չեն կարող համարուել միեւնոյն թարգմանչ
աշխատութիւն:

4. Կոնսուլիթարդմանութիւնը լեզուական
երանանայատակութիւններով թւում է ինձ
ամենից մօտ ոչ թէ Փիլնի, այլ Արխառութիւնի
“Յաղագս աշխարհի թարգմանութեան։ Այս
երկու թարգմանութիւնն էլ գրուած են յու-
նաբան մատչելի ու չասկանալի լեզուով։ Սրանք
երկուսն էլ գործ են ածում յաճախ օտար բա-
ռեր, մինչդեռ յունաբան միւս թարգմանութիւն-
ները յունաբէն բառերը, սովորաբար, աշխատել
են փախագրել Հայերէնի։ Օրինակ՝ այժի՞
կթեր Կոն. 39, 23, Ար. Աշխ. 606, 15, 625, 19,
Եթերային Ար. Աշխ. 606, 22, բայց արփի Փիլ-
նախ. 11, Պիտ., արփային Փիլ. Ահս., ելից եւ,
Բ. Զբարաց ամպովուն. 46, 6, 8, 12, 69, 4, 9,
Ար. Աշխ. 616, 5, Ք. Ջետրօն թէատրոն Կոն.
74, 1, բայց տեսլարան Փիլ. Ահս. 136, Տիմ.
Հակ. 315, 10, Դ. Շիշտար Հուետոր Կոն. 14, 4,
19, 22, բայց Ճարտասան Փիլ. տիս., Պիտ. 356,
26, ՑՍա. 422, 13, ԳՍՀՄ. 177, 27, Դգորփ. 254,
26, Վերլ. 581, 26, եւն, Ե. սօվուտչէս սովորական
Կոն. 14, 4, բայց իմաստակ Փիլ. Նախ. Եջ 9,
Ահս. 205, Պիտ. 347, 25, Իրեն. Ընդդ. Հերձ.
11, 201, սօվուտչէս իմաստական Վերլ. 561,

21. Κλιψιον 32, 10, Σ. ἐπιποκένταυρος θησαυρού² κενταύρων
της φρουράς θεού³. 18, 8, ρωμαϊκή δικαιοσύνη Φθίλη. Σερβιανή⁴
θεά. Ε. ἀνδριάς ανηρός, ανηρική, ανηρική θεά⁵. 24, 9,
70, 15, 18, 71, 5, 6, ρωμαϊκή απονηστική θεά Φθίλη.
θεά. Εγγονή⁶ 34, αγριαδένη θεά. Ομηρική. 238, 8, ε.
ειμαρμένη θησαυρού⁷ θεά. Βαριά θεά. 628, 10, ήτις πιρή⁸
θεά. Έλληνας ρωμαϊκή:

Աւշադրութեան արժանի են այս թարգ-
մանութիւնների մէջ նաեւ մի շաբէ համանման
բառեր, որնք յաւաբան միւս թարգ մանութիւն-
ներում կամ բոլորովին չեն գործածուած կամ
իմաստ հազուագիւտ են. օրինակ՝ . ձնտարխւած
գերհիւսիսային Կոն. 19, 18, գերհիւսիսական
Ար. Աշխ. 605, 17, Բ. ձնածուու վերատրութիւն
Ար. Աշխ. 612, 29, ձնածնամարած Կոն.
44, 7, գ. յառաջախօս Կոն. 72, 11, 15, Ար. Աշխ.
603, 26, դ. ուրօւէմիջ հրատեսակ Կոն. 44, 7,
Ար. Աշխ. 606, 24, Ե. գիւթանալ Կոն. 70, 11,
Ար. Աշխ. 614, 33, Ղ. շրջտափօն հրաւանու-
տրութիւն Կոն. 64, 2, 3 եւն, Ար. Աշխ. 614,
35, Լ. խոնամա փորտն Կոն. 69, 8, Ար. Աշխ. 615,
5, Ը. գովասանութիւն Կոն. 16, 9, Ար. Աշխ. 617,
3, Բ. քըրանոն ամպահարութիւն Կոն. 56, 5
եւն, Ար. Աշխ. 618, 10, Հ. էնօշի արտօնութիւն
Ար. Աշխ. 621, 10, արտօնանկեալք Կոն. 49,
5, Դ. արտօնութիւն նպերօշի Գոհյ. 154, 6,
արտօնող ԱՍԹ. 373, 20 եւն. Հ. յաւդաւո-
րութիւն Կոն. 48, 25, Ար. Աշխ. 616, 87, 617,
9, 622, 35, Խ. գիւրափոփոխ Կոն. 69, 12, Ար.
Աշխ. 625, 24, Հ. գետօրէն Կոն. 44, 6, 10, Ար.
Աշխ. 614, 26, տես նաեւ գլխօրէն Ար. Աշխ.
610, ... ածօրէն Ար. Աշխ. 613, 21:

Ակերեւ մենք տեսանք, որ թէ Կմննոսի մեկ-
նութիւնները եւ թէ Արխտոտելի “Յաղագս
ոշխարհի” գլուխածքը չեն կարող թարգմանուած
լինել յաւնաբան երկրորդ շերտի թարգմանու-
թիւններից առաջ եւ նրանց թարգմանման
terminus ante quem non պէտք է ընդունել
վեցերորդ դարի երկրորդ կէսը: Ժամանակագրա-
կան կարեւոր այս եղբակացութիւնը, ինչպէս եւ
նյոյն թարգմանութիւնների վիճեւ մատնանշուած
լեզուական նմանութիւնները, կարծում եմ որ
ուշագրաւ ու հաւանական նշաններ են, որ Կոն-
սոսի մեկնութիւնները խմբակից ու ժամանակա-
կից են ոչ թէ Փիլիպի, այլ “Յաղագս ոշխարհի”,
թարգմանութեանը:

pəhluwū:

ՊՐՈՓ. Յ. ՄԵՆԵՆԴԵԱՆ

(Եպոնակելի:)